
ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ
ԲՆԻԿ ՈՒ ՓՈԽԱՌՅԱԼ ՀԱՅՈՑ ԻԳՎԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հատկանվանագիտությունը (ономастика) հատուկ անուններն ուսումնասիրող գիտակարգ է, որն իբրև ենթաբաժին մտնում է բառագիտության մեջ: Կա կարծիք, որ այն լեզվաբանական առանձին բնագավառ է՝ իր երկու գիտաճյուղերով՝ տեղանվանագիտություն և անձնանվանագիտություն, որոնց լեզվական միավորների՝ տեղանունների և անձնանունների մանրակրկիտ ուսումնասիրությունը հանգեցնում է նոր ու ավելի խորը հանրալեզվաբանական ըմբռնումների ծագմանը: Կան գիտություններ էլ (պատմություն, աշխարհագրություն), որոնք հատկանվանագիտությունը համարում են իրենց օժանդակ գիտաճյուղը: Մակայն այս գիտակարգի մեջ մտնող անունները, թեև ինքնակա, բայց բավականաչափ սերտորեն կապված բառ-միավորներ են և որպես այդպիսիք պատկանում են նախնառաջ լեզվաբանությանը¹:

Լեզվաբանական այս գիտակարգը քննում է հատուկ անունների՝ անձնանունների և տեղանունների բնույթը, ծագումը, պատմականորեն կրած փոփոխություններն ու հարակից այլ հարցեր:

Որպեսզի ավելի հստակ պատկերացում ունենանք հատուկ անունների մասին, նախ նշենք վերջիններիս տարբերակիչ հատկանիշները հասարակ անունների համեմատությամբ: Այսպես, եթե հասարակ անուններն անվանում են առարկաների տեսակ՝ և՛ ընդհանուր, և՛ վերացական հասկացություններ, ապա հատուկ անունները, չլինելով տեսակի անուն, անվանապես անհատականացնում, կոնկրետացնում են առանձին առարկաներ ու անձեր: Սրանից էլ հետևում է, որ հատուկ անուններն իրենց անհատականացման դերի շնորհիվ դադարում են հասկացություններ անվանելուց: Ըստ որոշ քերականների՝ հատուկ անուններն աննշանակ են, մինչդեռ Բոլոր հատուկ անունները, լինեն նրանք մարդու, թե տեղի (լեռան, ծովի, լճի, գետի, քաղաքի, գյուղի և այլն) կազմված են հասարակ գոյականներից, և են բարդ կամ ածանց բառեր: Ուրիշ խոսքով՝ ամեն հատուկ անուն մի բառ է, նշանակությամբ օժտված հասարակ անուն²: Այս առիթով Մանուկ Աբեղյանը ևս նշում է, որ հատուկ անուններն առաջանում են հասարակ անուններից իմաստի նեղացմամբ. «Նույնպես առանց որևէ որոշող բառի, սեռի կամ տեսակի հասարակ անուններից ծագում են նաև հատուկ անունները, ինչպես՝ Ծա-

¹ А. В. Су пер а н с к а я. Общая теория имени собственного. М., 1973, с. 5.

² Հ ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 42:

դիկ, Աստղիկ, Գոհար...»³: Հետևաբար, «Բոլոր հատուկ անունները ծագումով հասարակ անուններ են՝ առաջացած փոխաբերական գործածությամբ...»⁴, որոնց առաջացումը պատմական զարգացման երևույթ է:

Լեզվում գործում է անձնանունների՝ հասարակ անվան վերածվելու երևույթը: Կան անձնանուններ, որոնք պահպանում են հասարակ անվան հետ ունեցած իմաստային կապը, և հակառակը, անուններ էլ կան, որոնք ծագումնաբանական այդ կապը իրենց զուգահեռ հասարակ անունների հետ բոլորովին կորցնում են:

Հատուկ անունները, ի տարբերություն հասարակ անունների, ավելի շատ են կախված արտալեզվական գործոններից և կանոնակարգվում են ոչ միայն տվյալ լեզվի օրենքներով, այլև սոցիալական, իրավական ու պատմական որոշ օրինաչափություններով: Խիստ մասնավոր դեպքերում էլ, ինչպես ուղղագրական բարեփոխումների ժամանակ, կարող են ենթարկվել կամ էլ մասամբ ենթարկվել ընդհանուր լեզվական նորամուծություններին⁵:

Անվանադրման ընտրության հարցում տարբեր ազդեր ունեցել են տարբեր մոտեցում, որի ընթացքում էլ յուրաքանչյուր ընտրված անուն տեղեկություն է տվել տվյալ ազգին բնորոշ սովորույթների և հայացքների մասին: Այդ սովորույթների, աշխարհընկալման և այլ հատկանիշների տեղեկատվության աղբյուր են ծառայում նաև հայոց իգական անունները, որոնց պատմական քննությունը կատարել ենք ըստ հետևյալ շրջանաբաժանման՝ ա) հնագույն շրջան՝ մ. թ. ա. VII դ. մինչև V դ., բ) հին շրջան՝ V դ. վերջերից մինչև XI դ., գ) միջին շրջան՝ XII–XVI դդ., դ) նոր շրջան՝ XVII–XX դդ.: Ստորև կանդրադառնանք միայն հնագույն շրջանին:

Իգական այդ անունները՝ քաղված Հրայրա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանից», վկայված են հայ պատմագրության մեջ, ձեռագրերում և վիմագիր արձանագրություններում: Այս անունները պատմության ընթացքում գործածվել են հայերի կողմից՝ անկախ վերջիններիս ունեցած դիրքից ու աստիճանից, դավանած կրոնից ու բնակության վայրից կամ երկրից: Մրանց ընդհանուր թիվն անցնում է երկու հազարից, որոնք, ըստ ծագման, բաժանվում են երկու հիմնական խմբի՝ բնիկ և փոխառյալ: Փոխառյալ անունների առկայությունը հայերենում պայմանավորված է արտալեզվական, այն է՝ քաղաքական, մշակութային, հոգեբանական, ինչպես նաև կրոնական գործոններով: Վերջինիս ցայտուն դրսևորումներից մեկն էլ հունական անունների տարածումն է հայերենում քրիստոնեության մուտքից հետո, երբ հայ հոգևորականությունը, հրաժարվելով հեթանոսական անուններից, ներմուծում է քրիստոնեական բազմաթիվ անուններ:

Հնագույն շրջանում գործածված շուրջ 50 իգական անուններից ընդամենը 12 անունն են կազմված բնիկ հայերեն արմատներով, մնացածները փոխառյալ, ա-

³ Մ. Ա. Բ. Ե. Ղ. Յ. և ն. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 144:

⁴ Հ. Խ. Բ. Բ. Ե. Ղ. Յ. և ն. Հատուկ անուն (տեսական նկարագրական ակնարկ), Երևան, 1964, էջ 42:

⁵ А. В. С у п е р а н с к а я. Структура имени собственного. М., 1969, с. 9.

նավելապես պահլավական անուններ են՝ պայմանավորված այդ շրջանում Արտաշիայան և Արշակունյան հարստությունների տիրապետությամբ: Դրանք կազմությամբ պարզ կամ ածանցավոր՝ Անահիտ, Անուշ, -ի-ով՝ Ահկի, Մարերի, -է-ով՝ Մանե, Նանե, -են-ով՝ Աշխեն, Ապրսամեն, -ենի-ով վերջացող՝ Վարդենի, ածականից և հայրանուններից -ուհի-ով կազմված՝ Զարուհի, Համազասպուհի, Տիգրանուհի, դուխտ և անուշ հիմքերով երկձևույթ՝ Զարմանդուխտ, Զրվանդուխտ, Խոսրովիդուխտ, Մանդուխտ, Վարագդուխտ, Վարդանդուխտ, Անուշվուռ, Արշանուշ, Մմբատանուշ, ինչպես նաև անհայտ ծագման անուններ են՝ Բասիանե, Դադանա, Մանե, Մեմփար, Նշնա, Ոգուհի, Փառանձեմ (ըստ Ջահուկյանի՝ իրան. farr-, որից հայ. փառ-ք, farn-, փառն-)⁶:

Հնագույն շրջանի իգական անունների իմաստաբանական և ձևաբանական մակարդակների խորքային քննությամբ հայտարարվում են այդ շրջանում՝ մասնավորապես քաղաքական և մշակութային ոլորտում հայերի ունեցած ըմբռնունները, նրանց կրոնադավանաբանական հայացքները: Ասվածի խոսուն օրինակ է հայկական հեթանոսական դիցարանում տեղ գտած, իսկ հետագայում հայերիս մեջ ամենատարածված Անահիտ աստվածուհու անունը:

Անահիտ < Anāhit «անբիծ, անարատ» անունը, որ կազմված է an ժխտական ածանցով և āhita «պիղծ, կեղտոտ» բառից, ավելի ուշ դարձել է Արուսյակ (anāhīd կամ nāhīd «արուսյակ») մոլորակը, որից էլ փոխառությամբ անցել է հունարենին և արաբերենին: Արաբների մեջ անգամ այն վերածվել է հասարակ գոյականի և nāhīd նշանակում է «նարնջի պես ստինքներով աղջիկ»: Մոլորակի իմաստ ստանալուց հետո դարձել է անձնանուն, որով հիշատակվում են Պարսից թագավոր Գուշտասպի կինը, Հունաց թագավոր Փիլիպպոսի դուստրը, Դարեհի կինը, որից ծնվեց Ալեքսանդրը: Հեթանոսական շրջանում հայերի մեջ այս անունը հատուկ էր միայն աստվածուհուն և համարվել է պտղաբերության, արգասավորության, ծննդաբերության, ավելի վաղ շրջանում նաև ռազմի աստվածուհի: Հայաստանում նա ամենաժողովրդական դիցուհին է համարվել, որին շնորհվել են «Մեծն Անահիտ տիկին, ծնունդ մեծին արին Արամագոյ, մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան...»⁷ տիտղոսները: Նավասարդի սկզբին (օգոստոսի 15-ին) հայերը մեծ շուքով նշում էին Անահիտի գլխավոր տոնը, որը կապվում էր բերքահավաքի հետ: Ծիսակատարություններն ուղեկցվում էին աղոթքներով, երգերով և խնջույքներով: Դիցուհուն զոհաբերում էին առաջին բերքը, իսկ արձանը պատում՝ ծառերի դալար շիվերով ու պսակներով, որից հետո նվիրաբերում սպիտակաթույր սրբազան ցուլեր: Այս աստվածության պաշտամունքն այնքան խորն է եղել, որ Եկեղյաց գավառի (Անահիտի անունով կոչվում է նաև Անահտական) Երիզա գյուղում ոսկեձույլ արձան է կանգնեցվել, որի համար էլ կոչ-

⁶ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 382:

⁷ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 146:

վել է նաև «Ոսկեմայր, Ոսկեծին, Ոսկեհատ դիք (Ագաթ. 809, Շնորհ. վիպ. 524)»⁸: Անահիտի մասին վկայում են նաև օտար պատմիչներից Ստրաբոնը, Պլինիոսը, Պլուտարքոսը և հայ պատմագիրներից՝ Ագաթանգեղոսն ու Մ. Խորենացին: Ստրաբոնի տեղեկությամբ՝ «Պարսից բոլոր աստվածությունները պաշտվում են նաև Մարաց և Հայոց կողմից. բայց Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորից...»⁹: Ի պատիվ աստվածուհու՝ Հայաստանի շատ տեղանուններ՝ գավառ, աղբյուր, ձոր, լեռնագագաթ, լեռնաշղթա և այլն, կոչել են նրա անունով, ինչպես՝ Անահիտի աղբյուր (աղբյուր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Հացի գյուղում), Անահտա աթոռ (լեռնագագաթ Հայկական լեռնաշխարհում, Անտիպոնտական լեռնահամակարգի Սկիդես լեռնաշղթայի արևելյան շարունակությունը կազմող հատվածում), Անահտա գավառ (գավառ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհում), Անահտական (լեռնաշղթա Հայկական լեռնաշխարհում, Անտիպոնտական լեռնահամակարգում, ձգվում է Ճորոխի ու Եփրատի միջև), Անահտաձոր (գյուղ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Սյուս Բաղք կամ Քաշունիք գավառում), Գյուլ Անահիտ (գյուղ Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Բայազետի գավառում, Բալխառոի դաշտում): Նրա գլխավոր տաճարը գտնվելիս է եղել Եկեղյաց գավառում, որը կոչվում էր նաև Անահտական: Մեծանուններ կային նաև Արտաշատում, Արմավիրում, Բագարանում, Անահտաձորում: Կուրքի նկատմամբ ունեցած ահա այսպիսի վերաբերմունքն էլ հանգեցրել է նրա անվան տարածմանը հայ ընտանիքներում: Հետագայում այս անունը դառնում է սովորական անուն և դասվում մեր ազգային գեղեցիկ անունների կարգում:

Նույն ճակատագրին են արժանացել նաև Անուշ և Աշխեն անունները, իսկ մյուս երեք անունները՝ Ահկի (ըստ Տաթևացու՝ Հայկ նահապետի երեք աղջիկներից մեկի անունն է, որով կոչված է հին հայոց ահկի ամիսը. ըստ Հր. Աճառյանի՝ ահկի /ահեկան/ ամսանունը ծագում է պհլ. āhrakān ձևից), Ապրսամեն (Ապրսամ < իրան. apursām «բալասան» ար. անունից է ծագել, որի կրողը եղել է Ադվանից Միհրական ցեղից, VIII դար), Արտաշամա (հայրս. arta «արդար, ուղիղ»+շամայ՝ անստույգ երկրորդ բաղադրիչից. գործածված է միայն մեկ անգամ ն. Ք. Ա դարում. անունը կրել են Արտաշես I-ի դուստրը, Տիգրան Մեծի քույրը և Միհրդատ Պոնտացու կինը) մնացել են սոսկ արխաիկ անուններ:

Անուշ անունը ծագել է (անոյշ) պհլ. anōš «անմահ» բառից, որ հետագայում իմաստափոխությամբ ստացել է «քաղցր» նշանակությունը: Այս անունն են կրել Մարաց Աժդահակ թագավորի կինը, որին Տիգրան I-ը գերելով՝ բնակեցրել է Մասիս լեռան ստորոտում և որից սերվել է Մուրացան նախարարությունը, Պարսից Ներսես թագավորի դուստրը, որին առնանգեց Թահիր արաբը, Արտաշես II-ի ժամանակակից Վաչեի որդի՝ Մահակ Արծրունու կինը, որ Մուրացան ցեղից էր սերում և այլն: Չպետք է շփոթել Աննա անվան՝ Կովկասում տարածված Անուշկա

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

ռուսական փառաբանական ձևի հետ: Այս անունը ևս հաճախված և սիրված անուններից մեկն է:

Աշխեն < պհլ. axšēn, պրու. xašīn «գորշ, կապտագույն կամ կանաչավուն» անունն է կրել Ալանաց թագավոր Աշխադարի դուստրը, որին կնության է առել Տրդատ թագավորը (IV դար): Այս անունը կրող անձը ազգությամբ հայ չի եղել:

Այս շրջանում գործուն ածանց է պարսկական ծագում ունեցող -ուհի իգականակերտ ձևությամբ, որով կազմված ընդամենը 5 անուն կա՝ Չարուհի՝ < պրու. zar «ոսկի» բառից, որը վերակենդանացավ անցյալ դարում՝ ստանալով նաև կրճատ՝ Չարիկ, Չարո և Չարուկ ձևերը (անունը կրել է Տիգրան I-ի կինը, որ ազգությամբ հայ է եղել), Համազասպուհի՝ Hamāzāspa < հպրու. hamāza «հավաքում, խումբ, բազմություն»+aspa «ասպ, ձի» բառերից, իբր «նա, որ ունի խմբով ձիեր», Սմբատուհի < Simbāt (ծագումն անհայտ)+ ուհի, Վարդանուհի կամ Վարդուհի՝ դուստր Վարդան Մամիկոնյանի, Տիգրանուհի < Tigrāna < «նետերով մարտնչող», որ վերակենդանացած և շատ տարածված անուններից է: Այս անունն է կրել Տիգրան I-ի քույրը, Մարաց Աժդահակ թագավորի կինը: Այս անուններում -ուհի-ն ունեցել է նաև աղջիկ իմաստը, այսինքն՝ Համազասպի աղջիկը, Սմբատի աղջիկը, Տիգրանի աղջիկը և այլն:

-Ենի ածանցով կազմված ընդամենը մեկ անուն կա՝ Վարդենի (դուստր Վ. Մամիկոնյանի՝ վերոնշյալ Վարդանուհի-ն կամ Վարդուհի-ն): Այս ածանցով անուններ են կազմվել նաև վաղ աշխարհաբարում, որոնք, սակայն, հետագայում լայն տարածում չեն գտել և աստիճանաբար դուրս են մղվել գործածությունից:

Երկհիմք անունների մեջ ակտիվ գործածություն ունեն հայրանուններից կամ որևէ հասարակ անունից դուխտ և անուշ անձնանվանակերտ բառերով կազմված իգական անունները՝ Չարմանդուխտ < պհլ. zarmān «ծերունի»+duxt «դուստր» (անունը կրել է Պապ թագավորի կինը. ավելի ուշ գործածվել է նաև Չարման, Չարմիկ կրճատ ձևերով), Զրվանդուխտ < պհլ. Zurvān «ժամանակ»+duxt հայոց թագուհի (կին Խոսրով III-ի, որ Պարսից թագավորի քույրն էր), Խոսրովիդուխտ < պհլ. xusrav «բարեհամբավ»+duxt, Սանդուխտ (դուստր Հայոց Սանատրուկ թագավորի), Վարազդուխտ < իրան. Varaz «վարազ կենդանին»+duxt (դուստր Խոսրով II-ի, կին Պապի), Վարդանդուխտ < իրան. Vardān+duxt. Վարդանուշ, Անուշվուս=Անուշ < պհլ. anōš+վուս իրան. Bahrām «արգելիչ, խափանարար», Արշանուշ/փղքշ՝ Նուշիկ/Արշակ < Aršaka/arša «արջ» բառի նվազականն է/+անուշ, Սմբատանուշ < Simbād (ծագումն անհայտ)+անուշ (դուստր Սմբատ Բագրատունու): Հնում այս անուններն իրականում անձնանուններ չեն եղել, այլ նշանակել են «Զրվանի աղջիկը», «Խոսրովի աղջիկը», «Սմբատի աղջիկը» և այլն, քանի որ այդ շրջանում կնոջ անունը տալը հայերիս մեջ ամոթ էր համարվում: Մեր օրերում բացասական համարվող այս երևույթն էլ իգական բազմաթիվ անունների առաջացման պատճառ է դարձել: Վերոնշյալներից Արշանուշ անունն իր փառաբանական ձևով (Նուշիկ) այժմ էլ գործածական է:

Հնագույն շրջանում փոխառված անձնանունների մեջ կան նաև ծագումով անհայտ անուններ՝ Բասիանե, Ղադանա, Մանե, Մեմփար, Նշնա, Ոգուհի (գուցե n-

գի+ուհի), Փառանձեմ (*հետագայում գործածվել է նաև կրճատ Փառո, Փառիկ ձևերով*), որոնցից պահպանվել են միայն Մանե և Փառանձեմ անունները, անշուշտ, դրանց կրողների՝ պատմական կամ սիրված անձինք լինելու շնորհիվ:

Հունարենից և եբրայերենից փոխառված իգական անուններն այս շրջանում համեմատաբար ավելի քիչ են: Մրանք կազմությամբ հիմնականում պարզ են կամ ածանցավոր: *Բարդ են Ջենոբիա և Սահականուշ < Իսահակ+անոյշ anōš անունները, թեև վերջինս կարելի է համարել պարզ՝ անուշ արմատի՝ այլևս որպես արմատ չգիտակցվելու փաստով պայմանավորված: Թե՛ դուխտ և թե՛ անուշ անձնանվանակերտ ձևություններն ավելի շատ ածանցական դեր ունեն նմանատիպ կազմություններում:*

Հունարենից փոխառված անձնանունների մի մասը իգական անուններ են հենց հունարենում, որոնք նույնությամբ կամ համարյա նույնությամբ ուղղակի փոխառվել են ու լայն տարածում գտել: *Դրանցից են՝ Երատո՝ < Σρατώ հունական համանուն իգական անունից, որ ծագում է Էρατός «սիրուն, սիրելի» բառից. այն ինքնուրույնից մեկն է և անձնավորում է ներդաշնակությունը. Ջենոբիա < Ζηνοβία «աստվածագոր»՝ կազմված է Ζήν «Ձև, Արամագր» + βία «ուժ, գորություն» բառերից, Կլեոպատրա «հոր փառքը»՝ կին Մեծն Տիգրանի, դուստր Մեծն Միհրդատի. Հեղինե < Σλένη, որ ըստ Աճառյանի՝ նշանակում է «նվիրական կողով, որ գեղեցիկ ծաղիկներով զարդարելով՝ նվիրում են Արտեմիս աստվածուհուն» /փղջ՝ Հեղուշ/, գործածական է հնագույն շրջանից մինչև այժմ: Հիպերիքիա՝ Հիպերիքոս < Ιπερήχιος արական անունից, որ նշանակում է «բարձրագույն», Հոփսիմե (ըստ Ագաթանգեղոսի՝ հունական «նետել, զցել» բայից. «Ըստ անուանդ քում արդարև ընկեցեալ եղեր»), Մարիանե՝ Մարիանոս «ծովային», որ Հոփսիմյան կույսերից մեկն է եղել, Ողոմպիադա «Ողիմպոս լեռան վրա բնակող նիսֆա». այս անունը կրել է Ալեքսանդր Մակեդոնացու մայրը, Հայոց Արշակ II թագավորի կինը. Սոփիա՝ < Σοφία անունից, որ նշանակում է «իմաստություն». կա այս անվան պատճենումը՝ Իմաստուհի: Հասարակ անունից՝ ածականից է կազմված միայն Ադուիթոս < ἀγαπητή «սիրուն, դուրեկան» անունը՝ ըստ Ղ. Ալիշանի. Աճառյանը արտասանական նմանություն է գտնում ἀλώβητος «վնասից զերծ» և ἀλώφητος «անդադար» անստույգ բառերի հետ:*

Եբրայական իգական անուններից փոխառվել են՝ Մարիամ < Maryām/Miriām, որ նշանակում է «լուսավորյալ», որն ունի նաև հուն. Մարիցա, գերմ. < Maria, ֆրանս. Marie, անգլ. Mary, ռուս. Мария (փղջ. Маша, Машинка) և այլ տարբերակները. Աննա < Χαννά, որ նշանակում է «շնորհ, գթություն». արանից է առաջացել Աննախաթուն անունը XV դարում, իսկ նոր շրջանում ձեռք է բերել հետևյալ ձևերը՝ Աննիկ (Պոլսի բարբառ), Անիկո/Անի (Ագուլիսի բարբառ), ռուս. Անիչկա. այս անունը գործածվել է դեռևս քրիստոնեությունից առաջ և եղել է Սամուէլ մարգարեի մայրը (ն. Ք. 1171). այս անունով է կոչվել նաև Մարիամ Աստվածածնի մայրը:

Հնագույն շրջանում գործածված անուններից հունա-լատինական ծագում ունի Գայանե Gaianus անունը, որ Հոփսիմյան և Գայանյան կույսերի գլխավորն է եղել: Այս կույսերը, իրենց երկրից հալածվելով, խմբով գալիս են Հայաստան, սակայն,

մեծ չարչարանքներ կրելով, նահատակվում են Տրդատ թագավորի հրամանով: Կույսի շիրիմի վրա կառուցվեց Գայանեի վանքը, որ մինչև հիմա կանգուն է Էջմիածնում:

Բնիկ հայերեն արմատներով իգական անունների մեջ, ի տարբերություն փոխառյալների, երկբաղադրիչ կամ բարդությամբ կազմված իգականներ համարյա թե չկան: Դրանք հիմնականում պարզ և հասարակ անուններից *-ի*, *-ակ*, *-իկ* վերաբերմունքային ածանցներով բաղադրված անուններ են՝ Բամբիշ, Շուշան (փղբշ.՝ Շուշանիկ, Շուշիկ), Աստղիկ, Արեգի (հին հայոց ամսանուններից մեկն է), Դուստր / Դստրիկ / Դխտիկ (այս անունները կրել է նույն անձը՝ Վարդան Մամիկոնյանի կինը), Երանյակ, Զվիկ, Նազինիկ, Սաթենիկ:

Աստղիկ անունը հնում դիցանուն էր, և հայկական դիցարանի սիրո ու գեղեցկության, ինչպես նաև երկնային լույսի (աստղի) աստվածուհին էր համարվում, որին անվանել են «Ոսկեծղի» կամ «Վարդամատն»: Նրան նվիրված տոնը Վարդավառն է, որն առայսօր տոնվում է շուքով: Եվ քանի որ սիրո և գեղեցկության աստվածությունից բացի համարվել է նաև ջրի աստվածություն, ուստի սրանից է առաջացել այդ օրվա՝ իրար վրա ջուր ցանելու սովորությունը: Աստղիկին նվիրված մեծանուններ կան Աշտիշատում, Արտամետում (Վանի մոտ): Ըստ ավանդության՝ եղել է Վահագնի սիրուհին, որի համար էլ Աշտիշատի մեծանունը կոչվում էր նաև Վահագնի սենյակ. «Մեհեանն անուանեալ Աստղկան դից, սենեակ Վահագնի կարգացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս» (Ագաթ., 809): Դիցուհու անունը մի շարք միկրոտեղանունների ծնունդ է տվել՝ Աստղանբերդ (բերդ Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոն գավառում, գյուղ Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Քղիի գավառում, լեռնագագաթ Վանա լճի ավազանում), Աստղիկ (գետ պատմական Փոքր Հայքում), Աստղիկի մեծյան (հեթանոսական տաճար Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Տոսպ գավառում և Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոն գավառում, Աշտիշատ ավանում), Աստղկան (Բերդ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Տոսպ գավառում), Աստղկանբերդ (Բերդ Արևմտյան Հայաստանում, Մուշի գավառում) և այլն:

Բնիկ հայերեն արմատներով և իրանական ծագում ունեցող *-ուհի* ածանցով կազմված 3 անուն կա միայն՝ Ավագուհի, Թագուհի, Ոգուհի (ըստ Գ. Ջահուկյանի՝ *ոգի-ն հ-ե* ծագում ունի): *-Ոց* ածանցով պարսկական ծագում ունեցող «վարդ» բառից ունենք Վարդոց անունը: *-Ե-ով* և *-ի-ով* վերջացող հիշատակված անուններ են՝ Նանե < **Nanā / Ninā** (դիցուհու անունը Աճառյանը, բացի նրա փոխառյալ տարբերակից, հավանական է համարում նաև նանե «տատ» հայերեն բառից նրա ծագած լինելը), Մարերի (ըստ Տաթևացու, իբր թե Հայկ նահապետի աղջիկներից մեկի անունն է, որից առաջացել է հայոց Մարերի ամսանունը, իսկ ըստ Աճառյանի՝ այն իրանական է), Արեգի (բնիկ հայերեն *ա* ըմբռնությամբ կազմված): *-Ե* և *-ի* ածանցները, ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անուններում կենսունակ բառակազմական ածանցներ չեն:

Այսպիսով, ելնելով վերոբերյալ փաստերից, հանգում ենք հետևյալին.

1. Հնագույն շրջանում գործածված հայոց իզական անունների ամենաստվար մասն են կազմում փոխառյալ անունները, որոնց գործածությունը միանշանակ կապվում է քաղաքական, մշակութային, կրոնական և արտալեզվական այլ գործոնների, այն է՝ Հայաստանում այդ ժամանակաշրջանում պարսկական տիրապետության հետ, որի արտաքին ազդեցությունը մեծ չափով նպաստել է պահլավական անունների փոխառության գործընթացին:

Հայաստանը պարթևների ժամանակներում նշանավոր անձանց ամուսնական բազմաթիվ հարաբերություններով, նույն տարագով և նույն սպառազինությամբ անքակտելի կապերով միացել է պարթևների պետությանը, որը, անշուշտ, անխուսափելի էր դարձնում նաև պարսկերենի գործածությունը ազնվականության և հոգևոր շրջաններում: Հայ արքունիքի պաշտոնական լեզուն, որ պարսկերենն է եղել, ապացուցում են թագավորների կողմից Հայաստանում հիմնադրված քաղաքների անունները՝ Արտաշատ, Տիգրանակերտ, Խոսրովակերտ և այլն: Ասվածից հասկանալի է, որ հայերենը մեծ քանակությամբ բառեր, այդ թվում նաև անձանուններ է փոխառել պարսկերենից, որոնց զգալի մասը հայերենին է անցել պարթևների ժամանակաշրջանում և ոչ թե Մասանյանների օրոք:

2. Անձանունները, ի տարբերություն տեղանունների, որոնք ըստ տևակաության հարակա են, ունեն կարճատև կյանք՝ կապված սերնդափոխության, գաղափարախոսության և սոցիալ-քաղաքական այլ ազդեցությունների հետ: Տեղանվան հարատևությունը որևէ քաղաքի կամ գյուղի դարավոր կյանք ունենալու արդյունք է: Մինչդեռ որևէ անձանուն էթե դարերով պահպանվել է և չի անհետացել, նշանակում է, որ այն կամ պատմական է, այսինքն՝ որևէ նշանավոր անձի անուն է, կամ էլ ունի ներդաշնակ հնչողություն ու բովանդակային գեղեցկություն: Այստեղ կարևորվում է նաև անվան հակիրճությունը: Պահլավական այդ անուններից, որոնք կազմությամբ պարզ, պարզ ածանցավոր և բարդ անուններ են, պահպանվել և ազգային երանգ են ստացել Անահիտ, Անուշ, Աշխեն, Ջարուհի, Վարդուհի անունները, որոնք բավական տարածված և հայ ժողովրդի կողմից սիրված անուններ են: Սրան հակառակ, գործածությունից դուրս են մղվել - դուխտ-ով կազմված երկհիմք անունները՝ Ջարմանդուխտ, Ջրվանդուխտ, Վարդանդուխտ, Արշանուշ, Անուշվոամ և այլն: Անուշ-ով կազմված Արշանուշ անվան փառաքչական (Նուշիկ) ձևն է պահպանվել միայն:

3. Ինչպես տեղանուններն անձանունների, այնպես էլ անձանունները տեղանունների առաջացման սկզբնաղբյուրներ են ծառայել: Այսպես, Անահիտ և Աստղիկ դիցանունները ծնունդ են տվել Անահիտի աղբյուր, Անահտա պթոռ, Անահտա գավառ, Անահտական, Անահտաձոր, Աստղիկ, Աստղիկի մեհյան, Աստղկան, Աստղկանբերդ տեղանուններին: Գայանե, Հոփսիմե և Հեղինե անուններով են կոչվել Սուրբ Գայանե, Սուրբ Հոփսիմե և Սուրբ Հեղինե սրբատեղիները:

4. Ըստ կազմության՝ բնիկ հայերեն արմատներով կազմված իզական անունները հասարակ անուններից -ակ, -իկ փոքրացուցիչ-փառաքչական վերջածանցներով բաղադրված անուններ են, այն էլ, ամենայն հավանականությամբ, կրճատված իրենց նախատիպ ձևերից: Սրա հիմնավորման փաստացի օրինակներ են հե-

տագա դարերում հիշյալ անունների աստիճանական կրճատումով առաջացած փաղաքական ձևերը՝ Հոփսիմե > Հոոիկ (1418 թ. ուշ), Հուոիկ (1653 թ.) / Հոփսիկ, Նազենիկ > Նազիկ (XV-րդ դ.) / Նազի / Նազե (XVII դ.) / Նազուկ (XVI դ.), Շուշանիկ > Շուշիկ (VII դ.) / Շուշան, Սաթենիկ (Աճառյանի ենթադրությամբ՝ հյ. սաթ+ենիկ, ինչպես՝ Արփենիկ, Վարսենիկ, Նազենիկ), > Սաթեն / Սաթիկ (ար.) / Սաթի / Սաթոն (ար.) (XVIII–XXI դդ.) և այլն: Ծովակ-ը, որ սկզբնապես իգական անուն է եղել, հետագայում դարձել է արական (ավանդված 1018 թ., այժմ՝ արական), իսկ XIV դ. իբրև իգական է գործածվել -իկ-ով կազմված ձևը՝ Ծովիկ:

5. Ըստ գործածության հաճախականության՝ հնագույն շրջանի փոխառյալ իգական անունները գերազանցում են բնիկ հայերեն արմատներով կազմված անուններին:

Այսպիսով, վերոնշյալ իգականները, ի տարբերություն հասարակ անունների, ավելի շատ են կախված արտալեզվական գործոններից և կանոնակարգվում են ոչ միայն տվյալ լեզվին բնորոշ լեզվական օրենքներով, այլև սոցիալական, իրավական, պատմական, նաև հոգեբանական օրինաչափություններով:

ЭКСТРАЛИНГВИСТИЧЕСКИЕ И ЯЗЫКОВЫЕ ФАКТОРЫ В ИСКОННЫХ И ЗАИМСТВОВАННЫХ АРМЯНСКИХ ЖЕНСКИХ АНТРОПОНИМАХ ДРЕВНЕЙШЕГО ПЕРИОДА

АЛВАРД ХАЧАТРЯН

Р е з ю м е

Этимологически древнейшие имена, в частности, армянские женские антропонимы (VII в. до н. э. – II половина V в.), подразделяются на две подгруппы – состоящие из исконно армянских корней и заимствованные. Заимствованные имена, в отличие от армянских, своей численностью и продуктивностью более значимы. Эта закономерность однозначно обусловлена экстралингвистическими факторами, языковой фактор здесь малозначим.

EXTRALINGUISTIC AND LINGUISTIC FACTORS OF ANCIENT ARMENIAN ORIGINAL AND ADOPTED FEMININE ANTHROPONYMS

ALVARD KHACHATRYAN

S u m m a r y

In the present article ancient Armenian feminine antroponyms are analyzed in the period of the 7th century B.C. and in the second half of the 5th century. Etymologically ancient names consist of two subgroups: those having original root and adopted names which in contrast to Armenian ones in their number and productiveness are more essential. This regularity is basically conditioned by extralinguistic factors, linguistic factors have less essential role.